ԱՐՓԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

# ԻՆՏԵԼԵԿՏԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ «ՄԱՐԴ» ԲԱԺՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՑ ԵՎ ԱՅԴ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշակերտների առողջության պահպանումն ու ամրապնդումը ժամանակակից դպրոցի ամենառաջնային խնդիրներից է, որի լուծմանն է կոչված դպրոցում դասավանդվող բնագիտության դասընթացի «Մարդ» բաժինը: Այս բաժնի խնդիրն է սովորողներին հաղորդել մարդու ընդհանուր օրգանիզմի և առանձին օրգանների կառուցվածքի, ֆունկցիաների և դրանց կարգավորման , հիվանդությունների և դրանց կանխարգելման,կմախքի համակարգի շեղումների և դրանց շտկման, հիգիենայի և առաջին օգնությունների մասին գիտելիքներ, որոնց տիրապետումը հնարավորություն է տալիս սովորողներին ոչ միայն ճանաչելու մարդու օրգանիզմի կենսաբանական կառուցվածքը, այլ նաև իրենց ուժերով կարգավորելու և ամրապնդելու սեփական առողջությունը, կեցվածքը, ողնաշարի ճկունությունը, անձնական հիգիենան, օրգանիզմի նյարդային և հորմոնալ կարգավորումը /Э. М. Казин, Н. Г. Блинова, Н.А.Литвинова 2000, Н.Н.Соковня Семенова 1999/:

Կապված վերոհիշյալի հետ, հատուկ հետաքրքրություն է ներկայացնում տվյալ հիմնախնդրի նկատմամբ լայն հասարակության ունեցած վերաբերմունքը: Հատկապես կարևոր է պարզել, թե ինչպես են ընկալում այդ հիմնախնդիրը հատուկ /օժանդակ/ դպրոցների մանկավարժները և դեֆեկտոլոգիայի ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողները՝ ապագա ուսուցիչները:

Այդ նպատակով, 2000/2001ուս. տարում մեր կողմից մշակված հատուկ հարցաթերթիկների միջոցով հետազոտություն ենք անցկացրել Հանրապետության մի շարք հատուկ / օժանդակ/ դպրոցներում, Երևանի մանկավարժական բուհերի դեֆեկտոլոգիայի ֆակուլտետների բարձր կուրսերում, որոնց մասնակցել են վերոհիշյալ դպրոցներում դասավանդող թվով 60 ուսուցիչներ և դեֆեկտոլոգիայի ֆակուլտետների բարձր կուրսերի թվով 85 ուսանողներ:

Հետազոտության ընթացքում փորձել ենք նախ և առաջ պարզել հետազոտվող ուսուցիչների մասնագիտական կրթությունն ու մանկավարժական ստաժը: Պարզվել է, որ ուսուցիչների 90%-ը ունեն բարձրագույն մասնագիտական, իսկ 10%-ը՝ ընդհանուր բարձրագույն կրթություն: Նրանցից 80%-ը ունեն 10-18 տարվա, 10%-ը՝ 20-35 տարվա, իսկ 10%-ն էլ՝ 1 տարվա

տվյալ հաստատությունում աշխատելու մանկավարժական ստաժ: Դա նշանակում է, որ ուսուցիչների հիմնական մասն ուներ ինտելեկտի խանգարումներով երեխաների հետ աշխատելու համապատասխան մասնագիտություն և աշխատանքային մեծ փորձ:

Քանի որ ուսումնական գործընթացի արդյունավետության կարևոր պայմաններից մեկը ուսուցչի կողմից իր աշխատանքը սիրելն է, ուստի փորձել ենք պարզել նաև թե հետազոտվողները սիրո՞ւմ են արդյոք իրենց ընտրած մասնագիտությունը:

Պարզվել է, որ դասավանդող բոլոր ուսուցիչները (100%) և ուսանողների 47 %-ը սիրում են իրենց մասնագիտությունը, իսկ ուսանողների մի մասը ընդունվել են այդ բաժին կամ ընդունելության քննությունների միավորները բավարարելու պատճառով՝ 28%, կամ ծնողների ցանկությամբ՝ 16,4%, դժվարանում են պատասխանել 8,2%:

Հետազոտության տվյալները վկայում են նաև, որ բուհը ավարտելուց հետո ուսանողների միայն 20%-ը ցանկություն ունեն հատուկ /օժանդակ/ դպրոցներում օլիգոֆրենոմանկավարժ աշխատելու, իսկ նրանց հիմնական մասը ցանկություն է հայտնել աշխատելու որպես լոգոպեդ (57,6%); մի մասն էլ այս հարցում դեռ չի կողմնորոշվել (2,3%): Իսկ դպրոցում աշխատելու դեպքում ուսանողների 25,8%-ն է ցանկություն հայտնել դասավանդել «Բնագիտություն » առարկան : Նրանց մեծ մասը նախընտրում է դասավանդել« Հայոց լեզու» (63,5%); «Մաթեմատիկա» (15,2 %) առարկաները; բոլոր առարկաները դասավանդելու ցանկություն է հայտնել ուսանողների 2,3%-ը:

«Մարդ» բաժնի և նրա դասավանդման գործընթացի վերաբերյալ ուսուցիչների և ուսանողների ունեցած տեղեկություններին մանրամասն ծանոթանալու համար մեր կողմից թեստերի միջոցով առաջադրվել են նաև հետևյալ հարցերը «Անհրաժե՞շտ եք համարում «Մարդ» բաժնի դասավանդումը օժանդակ դպրոցում», «Ձեր կարծիքով «Մարդ» բաժնից ո՞ր համակարգերի մասին գիտելիքներն են առավել կարևոր ինտելեկտի խանգարումով երեխաների համար, դրանցից որո՞նք են ավելի հեշտ և որո՞նք են դժվար ընկալվում նրանց կողմից, «կոնկրետ ինչո՞վ են պայմանավորված «Մարդ» բաժնի դասավանդման ընթացքում ինտելեկտի խանգարումով երեխաների ցուցաբերած դժվարությունները», «Մարդ» բաժնի դասավանդման ընթացքում ի՞նչ դժվարությունների եք հանդիպում»: Հարցումներից ստացված պատասխանների ցուցանիշները ցույց տվեցին որ «Մարդ» բաժինը դասավանդող բոլոր ուսուցիչները (100%) և ուսանողների 60%-ը կարևորում են այս բաժնի դասավանդումը հատուկ /օժանդակ/ դպրոցում, իսկ ուսանողների 9,4 %-ը կարևորում է

«Բույսեր» բաժինը, 8,2 %–ը «Կենդանիներ» բաժինը: Ինչպես վկայում են մեր հետազոտության տվյալները, «Մարդ» բաժինը դասավանդող ուսուցիչների կարծիքով ինտելեկտի խանգարումներով երեխաների համար մարդու օրգանիզմի բոլոր համակարգերի մասին գիտելիքների իմացությունը անհրաժեշտ է և կարևոր, սակայն նրանց կողմից ոչ բոլոր նյութերն են հեշտ ընկալվում: Բարդ են օրգանների կառուցվածքի, հատկապես, կմախքային, նյարդային համակարգերի, ոսկորների տիպերի, գլխուղեղի կառուցվածքի մասին տեղեկությունները, իսկ ավելի հեշտ են ընկալվում հիգիենային, առաջին օգնություններին, շտկողական աշխատանքներին վերաբերող նյութերը: Պետք է նշել, որ այս հարցում եղած դժվարությունները ուսուցիչները պայմանավորում են երեխաների ընկալման տարբեր հնարավորություններով, իսկ թե ավելի կոնկրետ ինչով է պայմանավորված «Մարդ» բաժնի դասավանդման ընթացում ինտելեկտի խանգարումով երեխաների ցուցաբերած դժվարությունները անկետային հարցաթերթիկներում բոլոր ուսուցիչները և ուսանողների 74,1%-ը առաջին հերթին մատնանշել են տրամաբանական մտածողությունը, հետո ճանաչողական գործունեությունը /83,3% ուսուցիչ, 65,8% ուսանող/, բանավոր պատասխանը / 50% ուսուցիչ, 16,4% ուսանող/, տեսողության ընկալումը / 16,6 ուսուցիչ, 7 %-ուսանող/, լսողության ընկալումը / 9,4% ուսանող/, ընդհանրապես ընկալումը / 69,4% ուսանող/:

Ինչպես նշում է Ս.Յա.Ռուբինշտեյնը ,,Մտավոր հետամնաց երեխաների ճանաչողական ակտիվության անբավարարությունը, կողմնորոշիչ գործունեության թուլությունը ուղղակիորեն բխում է գլխուղեղի կեղևի անլիարժեքությունից,, : Այդ պատճառով էլ այս երեխաների ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ են հատուկ պայմաններ ուղղված նաև նրանց թերությունների շտկմանը / Б.П.Пузанов, Х.П.Конаева, Б.Б.Горский, Е.Х.Соломина, Ю.А.Костенкова 2000/:

Մինչդեռ, ստացված տվյալներից պարզվում է, որ «Մարդ» բաժնի դասավանդման ընթացքում մասնագետները ունենում են մի շարք մանկավարժական պայմանների, ուսուցման միջոցների անբավարարության խնդիր: Դրանք են. մեթոդական գրականության բացակայությունը /100% ուսուցիչ, 30,5% ուսանող/ , բարդ ծրագիրը / 50%ուսուցիչ, 5,8% ուսանող/, աշակերտների ոչ կայուն հետաքրքրությունը / 66,6% ուսուցիչ, 32,6% ուսանող/, աշակերտների ոչ լիարժեք ուշադրությունը /50% ուսուցիչ, 67% ուսանող/, դիդակտիկ նյութերի բացակայությունը / 50%ուսուցիչ, 52,9% ուսանող/, նյութի վատ ընկալումը աշակերտի կողմից / 33,3 % ուսուցիչ, 49,4% ուսանող/:

/

Վերոհիշյալ տվյալներից ակնհայտ է, որ «Մարդ» բաժնի դասավանդման գործընթացում ուսուցիչների հանդիպած դժվարություններից ամենահիմնականը բարդ ծրագիրն է, մեթոդական գրականության պակասը, իսկ ուսանողների համար՝ աշակերտների ոչ լիարժեք ուշադրությունը և դիդակտիկ նյութերի բացակայությունը:

Հայտնի է, որ դասավանդման գործընթացի հաջողությունը կախված է նաև մանկավարժների մասնագիտական և մեթոդական պատրաստվածությունից /Р.А.Петросова, В.П.Голов, В.Н.Сивоглазов 2000/:

Ուստի մանկավարժների մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության, ինչպես նաև, նրանց գործունեության գործնական ուղղվածության ուսումնասիրության նպատակով փորձել ենք պարզել նաև, թե ուսուցման կազմակերպման ո՞ր ձևերն են նրանք առավել հաճախ կիրառում իրենց դասավանդման ընթացքում և թե դրանցից որո՞նք են ըստ իրենց նախընտրելի ինտելեկտի խանգարումներով երեխաների տեսական գիտելիքները գործնական կարողությունների ու հմտությունների վերածելու համար:

Պարզվում է, որ դասի ընթացքում մանկավարժները ուսուցման կազմակերպման ձևերից հիմնականում կիրառում են դասապատրաստումը / 100% ուսուցիչ, 57% ուսանող/ և դիդակտիկ նյութերի ընտրումը / 100%ուսուցիչ, 60% ուսանող/, իսկ ուսանողների մեծ մասը՝ ուսումնական աշխատանքները / խաղեր, վարժություններ,դիդակտիկ հանձնարարություններ/ /33,3% ուսուցիչ, 76,6% ուսանող/, հետո միայն դիդակտիկ նյութերի ընտրումը, ինքնուրույն աշխատանքները (42,3%) և ուսուցման կազմակերպման մյուս ձևերը բանավեճեր (10,5%), խմբակների կազմում (22,3%): Ինչ վերաբերում է ինտելեկտի խանգարումներով երեխաների տեսական գիտելիքները պրակտիկ կարողությունների ու հմտությունների վերածելուն, հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ ուսուցման կազմակերպման ձևերից հետազոտվողները առաջին հերթին նախընտրում են ուսումնական աշխատանքները /հատուկ վարժություններ, դիդակտիկ հանձնարարություններ, գործնական իրավիճակների ստեղծում, խաղեր/ / 100% ուսուցիչ, 77,6% ուսանող/, դիդակտիկ նյութերի ընտրումը, պատրաստումը, համակարգումը / 100% ուսուցիչ, 60% ուսանող/, ինքնուրույն աշխատանքը / 100% ուսուցիչ, 42,3% ուսանող/, բանավեճերը / 50% ուսուցիչ, 5% ուսանող/, առարկայական խմբակների ստեղծումը /16,6 % ուսուցիչ, 22,3% ուսանող/:

Ինչպես վկայում են մեր հետազոտության վերոհիշյալ տվյալները շատ դեպքերում, հատկապես, «Մարդ» բաժնի դասավանդման գործնական գործընթացներին վերաբերող հարցերի շրջանակներում, ուսուցիչների և

ուսանողների կարծիքները արտահայտող ցուցանիշները լիարժեք չեն համընկնում, ինչը պայմանավորված է ուսանողների գործնական պատրաստվածության անլիարժեքությամբ: Դա ապացուցված է մեր հետազոտության անկետային հարցումներից ստացված տվյալներով, որի համաձայն ուսանողները / 91,7 %/ թեև տեղյակ են «Բնագիտություն» առարկայի ծրագրին և նրա դասավանդման մեթոդիկային տիրապետում են գերազանց 1,1%, լավ 41,1%, բավարար 47% ցուցանիշներով, այնուամենայնիվ, «Մարդ» բաժնի դասավանդմանը մասնակցել են 1,1%-ը: Այս ցուցանիշները վկայում են նաև այն մասին, որ մանկավարժական բուհերում այսօր ոչ լիարժեք ուշադրություն է դարձվում ապագա մասնագետների «Բնագիտություն» առարկայի դասավանդման գործնական պատրաստվածության հարցին, ինչը ենթադրում է վաղվա օրվա հատուկ / օժանդակ/ դպրոցների «Բնագիտություն» առարկայի դասավանդման գործընթացի ցածր մակարդակը:

Ամփոփելով հետազոտության արդյունքները, մենք եկանք այն եզրակացության, որ թեև, հարցումների ենթարկված մանկավարժները քաջ գիտակցում են «Մարդ» բաժնի դասավանդման կարևորությունն ու անհրաժեշտությունը ինտելեկտի խանգարումով երեխաների համար, այնուամենայնիվ, կան բազմաթիվ չլուծված խնդիրներ: Դա նախ և առաջ «Մարդ» բաժնի դասավանդման ծրագրի կատարելագործումն է, երեխաների հետաքրքրության արթնացումն ու այդ բաժնի նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորումը, մեթոդական գրականության մշակումը ուսուցիչների և դաստիարակների համար: Այս խնդիրների լուծումն էլ հենց կդառնա հատուկ / օժանդակ/ դպրոցում «Մարդ» բաժնի դասավանդման որակի բարձրացման և երեխաների ինքնուրույն կյանքի պատրաստման լավագույն հիմքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рубинштейн С.А. ,,Психология умственно отсталого школьника ,, М. ,,Просвещение,, 1970.-стр.199
2. Соковня Семенова Н.Н., ,, Основы физиологии и гигиены детей и подростков с методикой преподавания медицинских знаний,,. М. изд. центр ,,Академия,, 1999.-стр.144
3. Казин Э.М., Блинова Н.Г., Литвинова Н.А., ,,Основы индивидуального здоровья человека,, Введение в общую и прикладную валеологию . М. Гуманит. изд. центр. ВЛАДОС 2000.-стр.192
4. Петросова Р.А., Голов В.П., Сивоглазов В.Н., ,,Методика обучения естествознанию и Экологическое воспитание в начальной школе,, М. ,,Академия,, 2000.-стр.175
5. Пузанов Б.П., Коняева Н.П., Горский Б.Б., Соломина Е.Н., Костенкова Ю.А., ,,Обучение детей с нарушениями интелектуального развития,, М. изд. центр ,,Академия,, 2000.-стр.268